ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- փետրվարի 2022 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «ՄԵԳԱՆԵՏ ԷՅՉ ԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի դեկտեմբերի 20-ի գրությունը, որով հայտնել է, որ նախատեսվում է Ընկերության մասնակիցների փոփոխություն, մասնավորապես՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 17 տոկոս բաժնեմասի սեփականատեր Բաբկեն Բազունցին պատկանող բաժնեմասը փոխանցել նրա իրավահաջորդին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Հարութ Բազունցին, իսկ Արարատ Արզումանյանին պատկանող 33 տոկոս բաժնեմասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վարդուհի Հովհաննիսյանին,

բ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի հունվարի 11-ի №01/11.1/95-2022 գրությունը, որի համաձայն՝ վերջինս իր իրավասության շրջանակում չի առարկում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 17 տոկոս բաժնեմասի սեփականատեր Բաբկեն Բազունցին պատկանող բաժնեմասը նրա իրավահաջորդին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Հարութ Բազունցին փոխանցելուն, իսկ Արարատ Արզումանյանին պատկանող 33 տոկոս բաժնեմասը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վարդուհի Հովհաննիսյանին նվիրաբերելուն,

գ) Ընկերության 2022 թվականի հունվարի 14-ի գրությունը, որի համաձայն՝ իր նախորդ գրության մեջ առկա է վրիպակ, այն է՝ նախատեսվում է Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 33 տոկոս բաժնեմասի նվիրատվություն (և ոչ թե նվիրաբերություն) ՀՀ քաղաքացի Վարդուհի Հովհաննիսյանին, ինչի կապակցությամբ Հայաստանի

Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի լրումն 2022 թվականի հունվարի 11-ի գրության, 2022 թվականի հունվարի 27-ի №01/11.1/569-2022 գրությամբ հայտնել է, որ իր իրավասության շրջանակում առարկություններ չունի,

դ) որ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 17 տոկոս բաժնեմասի սեփականատեր Բաբկեն Բազունցին պատկանող բաժնեմասը նրա իրավահաջորդին փոխանցման հիմք է հանդիսանում 2021 թվականի սեպտեմբերի 21-ի «Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը», և նշված գործարքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի իմաստով համաձայնեցման ենթակա չէ,

ե) որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Արարատ Արզումանյանին պատկանող Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 33 տոկոս բաժնեմասը Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վարդուհի Հովհաննիսյանին նվիրատվությամբ հանձնման գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ անհրաժեշտ է սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2022թ.